ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզ Արտավազ
I փող թիվ 44
E-mail artawaz@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2016 թ. N18
գ. Արտավազ

## ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջով** *համայնքի ավագանին որոշում է.*

**Հաստատել համայնքի ավագանու 4 արտահերթ նիստի օրակարգը.**

1. **«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին:**
2. **Արտավազ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:**

**Կողմ - 5, Դեմ -0, Ձեռնպահ-0**

**Ա. Գրիգորյան**
**Գ. Խաչատրյան**
**Հ. Հովհաննիսյան**
**Ա. Մելքոնյան**
**Ն. Ստեփանյան**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզ Արտավազ
1 փող թիվ 44
E-mail artawaz@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2016 թ. N19
գ. Արտավազ

## «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 1851-Ն որոշման պահանջները

*համայնքի ավագանին որոշում է՝*

1. Արտավազ համայնքի սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ գույքերը՝ սեփականության իրավունքով անհատույց հանձնել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Արտավազ համայնք,

ա) խմելու ջրի ջրատար
Գույքի ծածկագիրն է՝-07-017,N 2624682 տրված 15.10.2010թ.
Գույքի մակերեսը՝ խմելու ջրի ջրատար - 5222,2գծմ, 0,868հա
Գույքի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ
Հողամասի գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքներ:

բ) Ջրընդունիչ
Գույքի ծածկագիրն է՝-07-017 -0105-0005-001, N 20012014 -07 - 0035
Գույքի մակերեսը՝ - 0,0327հա
Գույքի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ
Հողամասի գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքներ:

գ) Գլխամասային կառույց ՕԿՋ, քլորակայան
Գույքի ծածկագիրն է՝ քլորակայան 07-017-0135-0118-001, 07-017-0135-0118-002, N13022017-07-0044
Գույքի մակերեսը՝ - 0.08326 հա
Գույքի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ
Հողամասի գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքներ:

Կողմ - 5, Դեմ -0, Ձեռնպահ-0

Ա. Գրիգորյան
Գ. Խաչատրյան
Հ. Հովհաննիսյան
Ա. Մելքոնյան
Ն. Ստեփանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզ Արտավազ
1 փող թիվ 44
E-mail artawaz@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ
26 մայիսի 2016 թ. N 20 -Ն
գ. Արտավազ

### ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով *համայնքի ավագանին որոշում է.*

1. Արտավազ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 11-ի <<Արտավազ համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին >> 40-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 01.01.01.51 ծրագրի 4264 հոդվածի 500.803 թիվը փոխել 350.803 թվով,
2) 08.02.04.51 ծրագրի 4639 հոդվածի 60.0 թիվը փոխել 360.0 թվով,
3) 10.07.01.54 ծրագրի 4729 հոդվածի 0 թիվը փոխել 100.0 թվով,
4) 11.01.02.51 ծրագրի 4891 հոդվածի 253.0 թիվը փոխել 3.0 թվով:

Կողմ - 5, Դեմ -0, Ձեռնպահ-0

Ա. Գրիգորյան
Գ. Խաչատրյան
Հ. Հովհաննիսյան
Ա. Մելքոնյան
Ն. Ստեփանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ